

որոց մէջ ուտելիք կայ, քուրճը միայն կը լուացուի: Իսկ եթէ ազոնց մէջ գտուի, եւ բովանդակութիւնը չոր է, ասոր մէկ մասը մաքուր կը մնայ՝ ըստ վերոյիշեալ հաշուին (աստ, 469). ապա թէ թաց է, մորթալն ու քուրճն ալ անպիտան են (Գ): Մկնապիղծ թաց հնձանը նոյնպէս խորտակելի է. եւ չորն ուրիշ ծառայութեան գործածելի (Է): Մի եւ նոյն խորտութիւնքը կը պատուիրէ՝ եթէ կատուն գմուկը բռնէ եւ ուտէ յիշեալ անօթոց վրայ: Ընդ հակառակն ողջ մուկն որ անօթի մէջ մտնէ, չի պղծեր, եւ «անխտտելի է ամանն» (Զ):

Մկնապղծի պէս կը հրամայէ վարուիլ շան կրծածին կամ լակածին հետ եւս (Ե). հետեւաբար անշուշտ նաեւ ասոնց անօթոց հետ: — Եթէ կատուն կամ շունը ծնանին ամանի մը մէջ, «խոտեալ անարգեսցին ամենեւին»: Եթէ իրենց բնական կարիքն ընեն անոր վրայ, չեն պղծեր. իսկ անոր ներսն ընելով, եթէ փոքր է՝ պէտք է կոտրել. եւ եթէ կարաս, ցամաք նիւթոց անօթ ընելու է (Զ):

Նոյն վարդապետը բաւական կը զբաղի թոնրով եւս: Մկան զիական եթէ մարած թոնրի մէջ գտուի, շինութեան դժուարութեան պատճառաւ թող չքակուի, կ'ըսէ.